Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
փորձագետ ճանաչելու մասին

09 հուլիսի 2019թ. ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ, երկրորդ դասի խորհրդական՝ Գ.Հ.Ավագյանս, վերանայելով վարույթիս թիվ 13884619 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2019 թվականի մայիսի 03-ին Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազությունից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181 հոդվածներով հետագա ընթացքը լուծելու համար ոստիկանության Կենտրոնական բաժին է ստացվել Մարի Մուշեղի Պետրոսյանի՝ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարին հասցեագրված դիմումն այն մասին, որ Մ.Խորենացու 26 հասցեում գործող <<Ոսկու աշխարհից>> ձեռք է բերել <<750>> հարգանի ոսկյա մատանի, սակայն հետագա հարգորոշմամբ պարզվել է, որ իրեն վաճառվել է ավելի ցածր հարգի ոսկյա զարդ, ինչի հետևանքով իրեն պատճառվել է զգալի չափերով գույքային վնաս:

Դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում 2019 թվականի հունիսի 02-ին ՀՀ քրեական օրենսգրքի 212-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 13884619 քրեական գործը և նախաքննության կատարման համար նույն օրն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին:

2019 թվականի հունիսի 6-ին թիվ 13884619 քրեական գործի նախաքննության կատարումը հանձնարանվել է ինձ, ընդունվել է վարույթ և կատարվում է նախաքննություն:

Դեռևս նյութերի նախապատրաստման ընթացքում 2019 թվականի մայիսի 08-ին նշանակվել է դատաապրանքագիտական և դատաապրանքագիտական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ <<Փորձաքննությունների ազգային բյուրո>> ՊՈԱԿ-ի փորձագետներին:

ՀՀ <<Փորձաքննությունների ազգային բյուրո>> ՊՈԱԿ-ից գրություն է ստացվել այն մասին, որ հաշվի առնելով ՀՀ ԳԱԱ <<Փորձաքննությունների ազգային բյուրո>> ՊՈԱԿ-ում <<թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, միներալների, հանքային ապարների հետազոտություն>> ենթատեսակով համապատասխան փորձագետի /գեմոլոգ/ բացակայությունը, միջնորդել են փորձագետ ճանաչել և փորձաքննության կատարմանը ներգրավել համապատասխան նեղ մասնագիտական գիտելիքներ ունեցող մասնագետի:

Վերոգրյալի կապակցությամբ գրություն է ուղարկվել ՀՀ քննչական կոմիտե՝ գեմոլոգ տրամադրելու խնդրանքով և ի պատասխան ներկայացվել է փորձագետ Արտակ Մովսեսյանը:

Նկատի ունենալով, որ նշված փորձաքննության կատարմանը անհրաժեշտ է

ներգրավել թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի հետազոտություն իրականացնող մասնագետի /գեմոլոգ/, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55, 243-245-րդ 248-րդ հոդվածների պահանջներով,

ՈՐՈՇԵՑԻ՝

1) Վարույթումս քննվող թիվ 13884619 քրեական գործով Արտակ Մովսեսյանին ճանաչել փորձագետ:

2) Փորձագետ Ա.Մովսեսյանին ներգրավել վարույթիս թիվ 13884619 քրեական գործով 08.05.2019թ. նշանակված դատանյութագիտական դատաապրանքագիտական համալիր փորձաքննության կատարմանը:

Ավագ քննիչ ***Գ.Հ.Ավագյան***